Ծառայություններից օգտվելու կանոններ

- Մոբայլ-բանկինգ ծառայությունից օգտվելու համար Հաճախորդը պետք է ունենա Android կամ iOS օպերացիոն համակարգով աշխատող սարքին վիճակում գտնվող սարքավորում (բջջային հեռախոս, սմարտֆոն, պլանշետ):
- Հաճախորդի սարքավորումը պետք է միացված լինի ինտերնետին (Մոբայլ-բանկինգ ծառայությունը չի մատուցվում ինտերնետ կապի բացակայության պայմաններում):
- Մոբայլ-բանկինգ ծառայությունն ակտիվացվում է Հաճախորդի՝ Բանկի գլխամասային գրասենյակում կամ ցանկացած մասնաճյուղում գրված համապատասխան դիմումի հիման վրա, կամ առցանց (online) դիմելու եղանակով:
- Հաճախորդը ինքնուրույն ներբեռնում է բջջային ծրագիրը համապատասխան հրահանգների միջոցով, որից հետո մուտք է գործում ծրագրի տարբերանշանով հավելվածը:
- Հավելվածում Հաճախորդը մուտքագրում է Բանկի կողմից տրամադրված «օգտանուն» և «գաղտնաբառ» տվյալները:
- Բանկի կողմից տրված գաղտնաբառն օգտագործվում է միայն առաջին մուտքի ժամանակ, որից հետո Հաճախորդը պարտավոր է սահմանել նոր գաղտնաբառ:
- Հաճախորդը Մոբայլ-բանկինգ ծրագրով համապատասխան գործարքները կատարում է և վճարման հանձնարարականներն ուղարկում է բջջային հավելվածի միջոցով համապատասխան հրահանգներ կատարելու միջոցով:
- Բջջային ծրագրից օգտվելու կանոնները և ուղեցույցը կարող են տրամադրվել են Հաճախորդին թղթային տարբերակով՝ վերջինիս կողմից այդպիսի ցանկություն հայտնելու դեպքում: